ՏԵՍԻԼ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Նոյնները, ՊԱՒՂՈՍ և ՆԱՒԱՍՏԻՔ

Պաւղոս. — Տէր իմ Նաւապետ, ահաւասիկ եմ ձեր հրամանին համեմատ։

Նաւապետ (ամենուն առջև). — Որդեակ, նաւաստիի կեանքը խիստ է, զրկողութեամբ և վտանգներով լի, բայց անոր վարձատրութիւնն ալ փառահեղ։ Հոն է յաղթութիւնը որ միշտ նեղութեանց և զրկանաց մէջ զմեզ կը մխիթարէ։ Հնազանդ եղիր քու պետերուդ, կարգապահ, ժիր, բարի ընկեր և ամենուն համակրութիւնը կը շահիս։ (Կարգի մտած՝ դուրս կ'ելնեն)։

ՏԵՍԻԼ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՊԵՏՐՈՍ. յետոյ ԿԱՍՏՈՆ

Պետրոս. — Ահաւասի՛կ մեկնեցան... Արդ, չեմ գիտեր թէ ինչու լալս կու գայ... Ուրախ էի որչափ որ հոս էր իմ քաջ Նաւապետս, և հիմայ որ ալ պիտի չտեսնեմ, տխուր պիտի ըլլամ... Է՜հ, ուրեմն կարգը իմս է ճամբայ ելնելու և վազը առաւօտ Բարիզ կը հասնիմ... Յաճախորդ մը եկաւ... (Կաստոն ներս կը մտնէ, աթոռ մը կ'առնու և կը նստի սեղանի մը քով)։

Կաստոն. — Սպասաւո՛ր, պորտոյի բաժակ մը և մի քանի թաթխոցներ։

Պետրոս. — Անմիջապէս, պարոն. (կ'երթայ ուզածը բերելու)։

Կաստոն. — Անօթի եմ... յետոյ անհամբեր է սիրտս տեսնելու եղբայրս... խեղճ Պաւղոս. եթէ ստոյգ է, ինչպէս որ ինքը գրեց, բաժնուած ըլլայ ճամբորդելու իր տխուր մոլութենէն, բոլորովին ամօթապարտ պիտի ըլլայ իմ առջևս։ Երջանիկ պիտի ըլլամ զինքը ողջագուրելուս... Նա դրամի պէտք ունի... Արդարև իրեն բերած եմ ոսկին որ գտայ իմ և բարեկամներուս քովը... ո՛հ, ի՜նչ երջանկութիւն, զինքը Բարիզ պիտի տանիմ և պիտի շարունակենք նախկին օրերնուս ընթացքը։ (Պետրոս կը բերէ գինին և թաթխոցները։ – Կաստոն թաթխոցները գինւոյն մէջ թանալով կ'ուտէ) Բարեկամ, շատ բազմութիւն ունի՞ք հոս։

Պետրոս. — Ահա ամենքը հիմայ դուրս ելան։

Կաստոն. — Երիտասարդ մը ժամադիր եղած էր տեսնուելու հետս, հոս Կեդրոնական Պանդոկիս մէջ։

Պետրոս. — Երիտասարդ մը որ քեզի կը նմանի քիչ մը, այսինքն է... քեզմէ քիչ մը փոքր։

Կաստոն. — Պաւղոս կ'ըսուի... եղբայրս է նա։

Պետրոս. — Ես չեմ գիտեր, բայց եթէ ան է, որուն վրայ կը մտածեմ, նա Քերկոլէյ Նաւապետին հետ Ժան-Պար նաւը գնաց։

Կաստոն. — Այդ նաւը դեռ նաւահանգստին մէ՞ջ է։

Պետրոս. — Նաւահանգստէն հեռանալու վրայ է...։

Կաստոն. — Ո՛, Աստուած իմ, Պաւղոս իմ սիրելի եղբայրս... վազեմ, հասնիմ. (թնդիւնի հարուած մը կը լսուի)։

Պետրոս. — Պարոն, անօգուտ է... նաւահանգիստը ասկից հեռու է, և ահա լսեցիր, մեկնելու նշանը տրուեցաւ։

Կաստոն (Աթոռին վրայ ինկնալով) Ո՜վ թշուառութեանս, ես ուշ հասայ։

Թրգմ. Հ. ՅԱԿՈՎԲ ՏԻՐՈՅԵԱՆ

Վերջ Երկրորդ Արարուածին

ARMENIA

Այս իտալալեզու ամսօրեայ թերթը՝ հրատարակած է Մայիս թիւը, ճոխ պարունակութեամբ, Էտկար Շահինի գեղեցիկ պատկերներով, և ընտիր յօդուածներու շարքով։ Սա միակ թերթն է Իտալիոյ մէջ՝ որ յամառ յարատեւութեամբ, ժիր ջանքերով կը ճգնի՝ բարձր նպատակի մը համար, ծանօթացնելու իտալական ազգին՝ Հայուն մարտիրոսութիւնը, ներկայապէս կրածները, ցուցնել որ նա զուր տեղ կը չարչարուի, ըմբռնել տալ որ այս ազգը մեծ հանճարներ ստեղծեր է. և ասոր իբրև ապացոյց՝ կը բովանդակէ շա՜տ մը թարգմանութիւններ մեր մեծանուն հեղինակներուն, ինքնագրութիւններ և այլն։ Այս թերթը այլ և ս մեծ ճիզաւորումներ առած է Իտալիոյ մէջ և դուրսը. Նախարարներէ և երեսփոխաններէ սկսեալ բաժանորդներ ունի։ Խմբագրութիւնը կը տպէ 3000 օրինակ, որոնցմէ 2000ը ձրի և նուէր կը ղրկուին իտալական թերթերու և կարևոր բարձրաստիճան անձերու, 500ը իր բաժանորդներուն, և միւս 500ը իբրև պահեստ՝ ղրկելու համար ուզողներուն, որ անպակաս են։ Ամենուն կը յանձնարարենք ամենաչնչին զոհողութեամբ մը բաժանորդագրուելու այս թերթին։ Տարեկան գինն է Ֆր. 5 արտասահմանի համար, իսկ Իտալիոյ մէջ Ֆր. 2,50։ Դիմել

Spett. Periodico « Armenia »

Corso Regina Margherita 73, TORINO (Italia)

digitised by A.R.A.R.@